ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/22, 18.02.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Վարդանյան-Շին» ՍՊԸ

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/81» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Քարաշամբի նոր թաղամասի ջրագծի անցկացման աշխատանքների ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

Պարտավորեցնել «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/81» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել ընկերության հայտը մերժելու մասին որոշումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Մ. ԱՆԱՆՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ
Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ

ԲՈՂՈՔՆԵՐԸ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ՝ *Ա. Ծատուրյանին*

<<18>> փետրվար 2019թ.

Գնումների հետ կապված բողոքը քննող անձին <<Վարդանյան-Շին>> ՍՊԸ-ի կողմից ք. Աբովյան 4-րդ մ/շրջ. 29/36ին. vardanyanshin16@gmail.com հեռ. 077-20-81-93 Արդշինբանկ ՓԲԸ հհ 24801319887210010 ՀՎՀՀ 03542873

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ,<<ՀՀ կոտայքի մարզի Քարաշամբի Նոր ջրագծի անցկացման>> ՀԾ-ԳՀ-ԱԵՁԲ-2018/81 ծածկագրով գնման ընթացակարգ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից, որը գործում է ՀՀ, ք. Երևան, Ուլնեցի 31, 4-րդ հարկ հասցեում, հայտարարվել է <<ՀՀ Կոտայքի մարզի Քարաշամբի նոր թաղամասի ջրագծի անցկացման>> աշխատանքների <<ՀԾ-ԳՀ-ԱԵՁԲ-2018/81>> ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը սահմանել է 10.01.2019թ. ժամը 10:00: Ընթացակարգի կայացման օրը՝ 10.01.2019թ.:

<< ՀԾ-ԳՀ-ԱԵՁԲ-2018/81>> ծածկագրով գնմանը հաղթող է ճանաչվել << ՎԱՐԴԱՆՅԱՆ-ՇԻՆ >> ՍՊԸ-ն:

<<ՎԱՐԴԱՆՅԱՆ-ՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

<< ՀԾ-ԳՀ-ԱԵՁԲ-2018/81>> ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ ՖՆ պահանջվող էլեկտրոնային հասցեներին և ներկայացվել է <<ՀԾ-ԳՀ-ԱԵՁԲ-2018/81>> մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած << ՎԱՐԴԱՆՅԱՆ-ՇԻՆ >> ՍՊԸ-ի մասին պահանջվող տեղեկատվությունը:

ՊԵԿ եզրակացությունը ստացվել է և մասնակցի հայտարարությունը համարվել է իրականությանը չհամապատասխանող: Հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների գումարը կազմել է 121 857 ՀՀ դրամ, որը գերազանցում է նվազագույն 50 000 դրամը:

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ.
1589-13

18.02.2019թ.

Միևնույն ժամանակ Ընկերությունը սահմանված ժամկետներում ներկայացրել է փաստաթուղթ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից, որտեղ նշված է, որ 121 857 ՀՀ դրամ կազմող ժամկետանց հարկային պարտավորության բաղադրիչներն են եկամտային հարկը՝ 43 857 ՀՀ դրամ և դրոշմանիշային վճարը՝ 78 000:

<<Վարդանյան-շին>> ՍՊԸ-ն իր պարտավորության մասին տեղեկանալուց անմիջապես հետո մարել է իր բոլոր հարկային պարտավորությունները, ավելին՝ ունի գերավճար 35 847 ՀՀ դրամ ԱԱՀ-ի գծով:

15.12.2016թ. ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է <<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին ՀՀ օրենքը>>, որը ուժի մեջ է մտել 09.01.2017թ.: Վկայակոչված օրենսդրության 1-ին հոդվածի համաձայն <<...օրենքով կարգավորվում են մարտական գործողությունների հետևանքով զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանվում են հատուցման հիմնադրամի ստեղծման և գործունեության կարգն ու պայմանները>>:

Նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանվում է <<Դրոշմանիշային վճար>> հասկացությունը, համաձայն, որի <<Դրոշմանիշային վճարը զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով և չափով ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճարը, որի վճարման պարտականությունը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքի 12-րդ հոդվածի առաջին մասով սահմանված չափով դրոշմանիշ գնեու միջոցով>>:

Վկայակոչված օրենքի 12-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ <<յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված ֆիզիկական անձինք դրոշմանիշային վճարը վճարում են 1000 դրամ գումարի չափով, իսկ անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ 12 000 դրամ գումարի չափով>>:

Սույն իրավական հարթության վրա անհրաժեշտ է իրավական գնահատական տալ <<պարտադիր վճար>> եզրույթին ներկայիս գործող սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի լույսի ներքո:

Մասնավորապես, ՀՀ սահմանդրությամբ 60-րդ հոդվածի 8-րդ նմասի համաձայն <<յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ>>:

27.11.2005թ.ին ընդունված ՀՀ սահմանդրության մեկնաբանությունների համաձայն՝ հարկերը՝ <<պարտադիր և անհատույց այն վճարներն է, որը հանրային իշխանության գործունեության ֆինանսական ապահովման նպատակով պետական և <<կամ>> համայնքների բյուջեներ է մուծվում վճարողների կողմից ինքնահարկման ու կամավորության հիման վրա կամ գանձվում է պետական հարկադրանքի միջոցով>>, տուրքեր կամ պարատադիր այլ վճարը՝ <<պետական և կամ համայնքների բյուջեներ մուծվող պարտադիր և անհատույց այն վճարն է, գանձույթը, որի վճարը հանդիսանում է

պայմաններից մեկը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այն վճարողի օգտին իրավաբանական նշանակության գործողություններ կատարելու համար>>:

Այսպիսով, փաստ է, որ <<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքով սահմանված << Դրոշմանիշային վճար>> եզրույթը չի կարող դիտարկվել <<հարկեր>>, եզրույթի տրիույթում այն պետք է դիտարկել <<նուրբը կամ պարտադիր այլ վճարը>> տիրույթում:

Ինչպես գործող, այնպես էլ նախկին սահմանադրությունների տրամաբանական վերլուծությունը հիմք է տալիս պնդելու, որ <<տուրքը կամ պարդատադիր այլ վճարը>> կատարելու արդյունքում վճարողի օգտին պետք է կատարվեն իրավաբանական նշանակության գործողություններ:

Նույն պարագայում, սակայն իրավաբանական նշանակություն ունեցող գործողություններ չեն կատարվում վճարում կատարողի օգտին, այս դեպքում դրոշմանիշային հարկադիր վճար կատարողը իր կամքից անկախ գնում է ինչ-որ դրոշմանիշ, որի գնման համար ինքը կատարում է հարկադիր գործողություն:

Հետևաբար, դրոշմանիշային վճարը չի կարող համարվել հարկային պարտավորություն, ուստի՝ անհիմն է Ընկերությանը զրկել Պայմանագիրը կնքելու հնարավորությունից մրցույթում հաղթող ճանաչվելու պարագայում:

Կից ներկայացնում ենք Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից 11.02.2019 թ.-ին էլեկտրոնային տարբերակով հրապարակված արձանագրությունը և որոշումը, վճարման անդորրագիր:

Պահանջը՝ Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին դադարեցնել ընկերության հայտը մերժելու որոշումը:

Տնօրեն՝ *Հ. Վարդանյան*